

ջրուռն թանն ի գլինն, երեսոցները բունքերուն, ճտեցն ու լոխը գլինն, դեղորուն՝ պոշով աչքերը վրան տապալկ երեսին, և այս պննապարզ կուռքին իբր փոր՝ սեռակ (ամանիկ) մը ալկիկ՝ եօթն աղբուրէ ժողոված, սաստուհը դրած ջրովը ջրալից...

Երկու խոսք այ՝ և խոճկոցիկին խնձորը թող իջնէ (*):

«Մամանիկ»ի խաղին ծագումը շատ չին է: Վրայէն դարեր անցած կործանեալ քաղաքներու աւերակներուն մէջ երևան կուգան պաճոճապատանքներ՝ որ կ'հանգչին մեռած փոքրիկ աղջիկներու քովիկը: Այս հորեայ սովորոյթին՝ սիրուն աւանդալէպ մը կ'միանայ:

«Կորնթացի դեռահասակ կոյս մը մեռնելով՝ իր ծծամայրը կ'հաւաքէ անոր բոլոր խաղալիքներն ու զանիւրդ մը մէջ տեղադրելով՝ կ'տանի կ'դնէ անոր զամբասանքարին գոլիւր: Եւ որպէս զի անոց բաց օդին ազդեցութենէն չայլայլէ՝ կոլիկներով կ'ծածկէ: Համբիւղն ապա դանտեցան զիպաճածաբար գետեղուած Աքցամալիի մը (Acanthe) արմատին վրայ: Գորանն մագդուկներն ու տերևներն իրենց պարունակին մէջ կոլիկներին ծանրութենէն ծնուած՝ դամբիւղիկ կուշտեղէն վրէ կան, ապա կ'որսնալով ու դանտայով՝ բնական ողորպարողը կազմեն: Գալիսը (Callimaque) արձանագործն այս զամբասանքն քրտէն սփռելու պահուն՝ նշմարեց հետուին տերևներուն սպիտակ շարակարգութիւնն, և ասի ծագում տուաւ ճարտարապետական ոճերու մէջ ծանօթ կուրբնթական խոյակին »:

ՎԱՆԸ

Տ. ՉԻՐՈՒՆԻ

Ք Ի Ո Ն Ի Կ

Թիֆլիսի Հորիզոնին մէջ, 1էօ՝ գեղեցիկ յօդուածով մը արտաբերած էր վերջերս որ զայ տարուան սկիզբը հայ ժողովուրդը տօնէ հայկական տպագրութեան չորսհարիւրամիակը, եւ այդ առթիւ հայ գրականութեան զարգացման մ'առաջն աջակցող հաստատութիւն մը՝ հայ-գրական ֆօնտ մը հիմնուի: Հայկապազ գաղափար, որուն խաղաղաւա համամութիւնը կը յայտնեմ, եւ որուն իրականացման բարոյկարգն պէտք է օժանդակեն անշուշտ բոլոր հայ մտաւորականները: Բայց եթէ այդ ֆօնտն այ՝ երբ հիմնուի՝ պիտի ունենայ այնպիսի կենսունակութիւն մը ինչպէս Թիֆլիսի Հրատարակչականը... վայ՝ հայ գրականութեան գլխուն:

Այդ հաւաքումներուն մէջ ուր հայկական տպագրութիւնը տօնող մտաւորականները պիտի խորհրդակցին՝ գրական ֆօնտը կազմուի համար, երանք՝ թէ կարենան աս երկու էական հարցերուն լուծումը գտնուի: 1. — Ինչպէս ընել որ հայ մարդը գրքի եւ լրագրի դրամ տարու վարժուի (էն հիմնական

միջոցը՝ հայ գրականութիւնը մշտապէս ապահովելու): 2. — Ինչպէս ընել որ մեր ամէն հանրային գործերուն մէջ՝ մասնաւոր առեւնէ մը ի վեր՝ ցոյց արուած առաւոր զանազանութիւնը, հետեւողականութեան պակասը, անկանոնութիւնը, անձնապահութիւնը, որոնց երեսնէ մեր նոյն իսկ ամենայաւ ծրագրով սկսած մարմիններն ու հաստատութիւնները կը կտայն կամ բնաւ չեն քալեր, բուժում գտնեն:

Ահարաժեշտ է որ այդ մեծ տօնը տօնելու եւ այդ առթիւ հայ-գրականութեան զարգացումը ապահովող այսպիսի ձեռնարկ մը յաջողցնելու համար՝ ո՛չ միայն Ռուսահայք այլ եւ իրքեայն ու պարսկահայ հասարակութիւններէն՝ ինչպէս եւ արտասահմանի կախեալ գաղութներէն ներկայացուցիչներ գտնուին այդ համազգային նշանակութիւն ունեցող հանդիսաւորութեան արջ. ծանօթ ըլլալով մեր անհոգութիւնը՝ զանազանութիւնը որուն վերեւ ակնարկեցի, դժբաղդաբար շատ յոյս չունիմ որ ամէն կողմէ պատգամաւորներ երթան մասնակցել կովկաս կատարուելի հանգչեմէն: Շեղանդաղէի յօդեւանին առթիւ թրքաւոր մտաւորականութիւնը ղէպ ի առասպալ վարպետը իր յաղթանքը շատ վայելուէ եւ փայլուն կերպով յայտնեց յօդուածովի: Ուսումնասիրութիւններով եւ քանախօսութիւններով, բայց Պոլսոյ գրական հասարակութիւնը հարկ եղած կողքիկ ճիգը չուզեց ընել պատուիրակ մը ուղարկելու համար որ երթար կովկաս ներկայ գտնուէր յօդեւանին եւ անձամբ յայտնէր թրքաւոր մտաւորականութեան մեծարանքը, հակառակ որ այդ գաղափարը որոշապէս թելադրած էինք այս էջերուն մէջ: Այս զանգուռութիւնը եւ կը բացատրեմ ոչ թէ չկամութեամբ, այլ այն համարաւոր գանդաղութեամբ զոր մատնանել ըրի իբրեւ մեր հաւտեղին մին: Որպէս զի այդ նոյն զանազանութիւնը արգելեց ըլլայ 1էօ գաղափարին համազգային հանդիսաւորութեամբ իրազօրութելուն՝ եւ կ'առաջարկեմ հետեւեալը. հայկական տպագրութեան չորսհարիւրամիակը տօնել յառաջիկայ կաթողիկոսական ընտրութիւններին անմիջապէս յետոյ. այդ առթիւ արդէն իսկ աշխարհիս ամէն կողմէն մեր ազգային կեանքին մէջ մեծ նշանակութիւն ունեցող այդ հարցը լուծելու համար ազգին բոլոր հաստատմաներուն կողմէն ընտրուած կաթեւոր անձնաւորութիւնները պիտի հաւաքուին էջ-միածին: Ընտրութիւնը կը կատարուի դեկտեմբերի վերջերը, հայկական տպագրութեան չորսհարիւրամիակը՝ անոր կցեւով նաեւ հայ տառերու գիւտին հազար չորսհարիւրամիակը՝ կ'առաջարկեմ կատարել յառաջիկայ յունուարի սկիզբներուն, մասնակցութեամբ բոլոր կաթողիկոսական տպագրութիւններու, ինչպէս եւ այն բոլոր առասպալ անձնաւորութեանց որ պիտի փափաքին մասնակցել, ու այն թրքաւոր կամ պարսկահայ մտաւորականներուն (եթէ երբէք պատահի) որոնք պիտի

(*) Հեմբարձեր միօս կ'իմրեանան այս խօսքով. — Երկուց երեք խնձոր՝ իցաւ, մէկն ստողաց, մէկը լուրաց, մէկն սկանց արողաց »:

ուզեն այդ տոնին երթալ մասնակցելու համար հարկ եղած « յոգնութիւնը » յանձն առնել :

* *

Հայոց նոր գրականութեան նապաստաններն մին եւս՝ Ղազարոս Աղայեան, անհեշտապես մեր հորիզոնէն թէպէտ եւ Արեգնազանի պաշտելի հեղինակը իր գործը ամբողջապէս կատարած էր, բայց իր մար ամենախոր ցաւ կատաղած ամբողջ Հայութեան, որովհետեւ այդ ամբողջ եւ աշխիւ դէմքին շողորմ մեր հանրային կեանքին վերեւ՝ գեղեցկութիւն մը, հաճոյք մը եւ սիրով մըն էր մեզի համար : Միեւնոյս այստեղ Տորի երգչին գործը վերջ բերածը չէ : Լէօ Նորիզոնի մէջ իր գեղեցիկ եւ հիւսիսից յօդուածներովը : Միմոն Յազարեան (որ Շիրազիցազէի մասին իր լուրջ եւ բարեխիղճ ուսումնասիրութեամբ ճշմարիտ քննադատի կարողութիւններ յայտնեց) Ազատամարտի մէջ իր նուրբ յօդուածովը՝ արգէն իսկ այդ վերլուծումը ըրին գրեթէ լրակատար կերպով : Եւ կ'ուզեմ միայն այստեղ քանի իմ սողովը՝ իմ որդիական յարգանքս արտաայտուել ինչո՞ք ոտքը այն շիրիւն ուր կը հանգչի մեր նոր գրականութեան ռազմաշինարէն մին, մեր արդի հայ կեանքի է՛ն աղետը, է՛ն մեքուր եւ է՛ն հայ գէմքերէն մին :

* *

Ծաւալի երեւոյթ մը որուն վրայ պէտք կը տեսնեմ ուշադրութիւն հրաւիրելու՝ այն է որ թրքահայ մամուլը շատ քիչ առջած, յաճախ շատ տաքով, արձագանգ կը հանդիսանայ ռուսահայ մամուլի մէջ երեւցած այնպիսի առաջարկներու կամ կոչուքներ որոնք ռուսազգային նշանակութիւն ունին եւ ուղղուած են ամբողջ Հայութեան : Օրինակի համար՝ թրքահայ թերթերէն ո՞չ մէկը գտնէ երկուսողով ծանուցի իր ընթերցողներուն Լէօի այս կարեւոր առաջարկը որու մասին խօսեցայ քիչ մը առաջ : Եւ սակայն հակակախ տպագրութիւնը միայն Ռուսահայոց համար չէր որ հիմնուեցաւ : առաջարկը՝ այն ձեւով որով Լէօ զայն նկարագրեցած է՝ շատ գեղեցիկ է եւ ամբողջ ազգին օգտակար : առաջարկը ընողը չէ թէ միայն ռուսահայ այլ եւ ամբողջ հայ արդի գրականութեան ամենամասնաւ եւ ամենակարեւոր դէմքերէն մէկն է : այսպիսի պարագայի մը թրքահայ մամուլին լռութիւնը անհասկնալիք է եւ անհերքելի կը գտնեմ : Նոյնպէս անհասկնալիք է եւ անհերքելի կը գտնեմ այն բացարձակ լռութիւնը զոր թրքահայ մամուլը պահեց ի պատիւ Արեգնազանի յուշարանի որ կանգնելու նպատակաւ Թիֆլիսի Նորիզոնի բացած հանդիսակութեան հանդէպ : Արեգնազան Միւրիկի Արքային հետ Հայոց նոր ժամանակներու գրականութեան ամենամեծ ռազմաշինարէն : անոր ի պատիւ յուշարան մը կանգնելու գաղափարին թրքահայ ամբողջ մամուլը պէտք էր խանդավառութեամբ արձագանգ

հանդիսանար : Պէտք է խոստովանել որ Ռուսահայ շատ աւելի կը շահագրգռուին Թրքահայոց թէ՛ ազգային եւ թէ՛ գրական կեանքով զան թրքահայ Ռուսահայոց կեանքով, գտնէ այս վերջին 2-3 տարիներուն մէջ, ուր սակայն արտաքին հանդիսանքները շատ աւելի նպատակաւոր են հայ ժողովրդին հետաքրքրուածներուն միջեւ : կանոնաւոր ու սերտ բարոյական կապ մը պահպանելու եւ մեծ հարցերու մէջ գործակցելու : Այդ ալ պէտք է բացատրել այն տեսակ մը « յոգնածութեամբ » որուն մէջ կը գտնուի համիտեան լեծիմիկ մղձաւանջէն նոր դուրս ելած զեռ կէս-հիւանդ եւ ջղագար թրքահայ հասարակութիւնը : Այն գտնածանները որ կը լսուին նոյն իսկ թրքահայ հրապարակագիրներէ ոմանք կողմէ՝ թրքահայ գրականութեան այժմեան կողման մասին, ատով կը բացատրուին դարձեալ : եւ իսկական անկում չեմ տեսներ : Թրքահայ գրականութիւնը այժմ իր ծոցին մէջ կը հաշուէ շատ գեղեցիկ տաղանդներ՝ թէ հին եւ թէ՛ նոր (°) : Բայց « գրական ընդհանուր կեանքը » ակարացած կ'երեւայ, նախ որովհետեւ հասարակութիւնը յոգնած է ինչպէս ըսի, երկրորդ՝ որովհետեւ արուեստի եւ գրականութեան մեծ թշնամին՝ քաղաքականութիւնը՝ զեռ կը շարունակէ շատ տրիական տեղ մը բռնել մեր մտաւոր կեանքին մէջ : Այս էական հարցերուն վրայ անհրաժեշտ է ուշադրութիւն դարձնել : պէտք է առանց իրար անցնելու, առանց յուսահատալու՝ ճիշդ արձանագրելու, ջանքեր ընել որուն գրական գործունէութիւնը զօրացնելու համար, եւ նոյն ատեն ռուսահայ ազգային եւ գրական կեանքին հետ թրքահայ մտաւորականութեան հանդիպակցութիւնը պահպանելու համար : Եւ ասկիւ պիտի ըլլայ երբ թրքահայ զուարճարար գրագէտները, ինչ կուսակցութեան ալ որ պակասին, գիտանալ քաղաքական մտաւորականութիւններէ եւ մտաբանութիւններէ զարժք լոկ Հայ Գրականութեան յառաջդիմութեան գաղափարին շուրջը խմբուի եւ գործակցի : Պէտք է հիմնել Թրքահայ Գրագէտներու Ընկերակցութիւն մը : Կովկասի մէջ եւս պէտք է հիմնուի Ռուսահայ Գրագէտներու Ընկերակցութիւն մը : Եւ այս երկուքը մշտական հաղորդակցութեան մէջ ըլլալ իրարու հետ :

(*) Գրական ի՞նչ գնովիք ճոր ճոխութիւն մըն է՝ օրինակի համար՝ այն Արեգի երգերու իմնասիրտ ու կենսալիս փոփոք զոր օրիորդ Մաննիկ Պէրլեւեան բերաւ այս օրեւ իսկ ակնցնել մեր բանաստեղծութեան բուսասանին : Եւ ի՞նչ ճոխակապ էր մըն էր որով օրինակ Զապել Եսայեան, որ իր հարուստ օտանդով ծանցեց ի վեր մեծացող գարիշէն մին է մեր ենրկալ գրակնութեան, որունց « Աղաւազներ » իմ մէջ յայնժոյթեմ այդ հայ երեքդական երգափայլ գեղեցկութեան : Եթե մեր մէջ ամեն բան այլ-ման Երուսաղիմ, ազնուարար եւ կատարելութեան առաջադիմութեան օրման այդ երգերն եւ այդ կենսալիսակը, մեմ խաղաղակալ պագերու մէջ առաջնակարգ տեղ մը կը գրաւէին :

Ձուտ գրական հանդէսներ կը սկսին երեւնալ այս վերջերը, Պոլիս, Իզմիր, Պոսթոն, Ագասամարտ գրական յանձնաւ. Ուսան, Հայ Գրականութիւն, Շանք, Արագած, լաւ նշան մըն է այդ արդէն: Բայց պէտք էր զուտ գրական մեծ օրաթերթ մը, մեր երբեմնի Հայրենակիցի տեղը բռնող թերթ մը պէտք է. ասոր մեծ ուժը իր ընթացիկ գրական մեծ թերթը ըլլալն էր:

* *

Թիֆլիսիցի հարիւր մէջ Հայերու հանրագրութեան մասին թաւ մը: Ազգային Ժողովը հարկ դատեց զայն վերադարձնել՝ որպէս զի ստորագրութիւնները վաւերացուին Լատ կառնոսագրութեան՝ թերեւս այդ ձեւակերպութիւնը անհրաժեշտ էր. բայց ինչո՞ւ չգտնուեցաւ մէջ հոգի որ Ժողովին մէջ, որ այդ որոշումը ստորագրէր, թերեւս ինչի որ սա պարզ եւ անհրաժեշտ յայտարարութիւնն ընէր. « Մենք չենք տարակուսիր որ այս հանրագրութիւնը վաւերական է, բայց օրէնքը յարգելու համար միայն՝ կ'ուզենք որ այդ ձեւակերպութիւնը կատարուի: Լրագրութիւնն մէջ հրատարակուեցաւ. բնագիրը, թերեւս ինչ որ մեր Թիֆլիսի հայրենակիցիներէն ոմանք մենք կը խնդրեն. այդ բանի ընել արդէն մեր պարտքն է. կը ցաւինք որ մենք ուշացած ըլլալով այդ պարտքը կատարելու՝ մեր Թիֆլիսի հայրենակիցիները կը ինչցեն մեզ զայն. առանց իսկ սպասելու որ հանրագրութիւնը վաւերացուելով դառնայ հոս եւ պայտօնապէս կարդացուի, մենք գալ հստիս իսկ պէտք է սկսինք քննել Օրմանեան արագանի խնդիրը: » Ոչ միայն ըսող չեղաւ, այլ ամբողջ Ժողովը ձեռն ունի ըրջօրէն սպասելու հանրագրութեան դառնալուն՝ որպէս զի Օրմանեան արագանի հարցը լուծէ... Ի՞նչ ամօթ թրքահայ հասարակութեան համար...

* *

Պոլսոյ թերթերէն ոմանց մէջ ատենէ մը ի վեր թուրքերէն բաժին մը կը տեսնեմ աւելցուած. մա ինքն Անանիոսի մէջ յայտնած էի այն կարծիքը թէ այս թրքագէտ հրապարակաստիքները մեր ազգին մեծ ծառայութիւն կը մատուցանեն եթէ ուղղակի թրքերէն լեզուով խօսին թուրք հասարակութեան այն հարցերու մասին զոր մեր եւ երկրին ընդհանուր շար կը պահանջէ որ մանրամասնօրէն բացատրենք եւ լուսաբանենք թուրքերուն: Բայց ես նախընտրելի կը գտնեմ որ այդ գործը չկատարուի հայերէն թերթերու միջոցով. աւելի՛ լաւ է եւ աւելի՛ քանակա՛ն որ հայ թրքագէտ հրապարակագիրները գրեն ուղղակի թուրք թերթերու մէջ. եւ կամ հայ թրքագէտ խմբագիրներու. ձեռքով հրատարակուող թրքերէն օրկան մը հինուո՞ւ ինքի խորթ կը թուի տեսնել հայ թերթերը կիսովին թրքացած, ինչքան ալ որ լաւ նպատակով եղած ըլլայ ատկեւ: Ոչ գեղեցիկ կը գտնեմ զայդ,

որ ալ խոհեմ Ոչ մէկ ցեղ չէ ըրած այդ բանը: Մեր թերթերը պէտք է միայն մեր լեզուով խմբագրուին:

* *

Ստացայ Թ. Թօրամանեանի նոր հրատարակած գիրքը որ կը պարունակէ հմտալից եւ ինքնատիպ ուսումնասիրութիւն մը Տեկորի տաճարին մասին, զարդարուած բազմաթիւ լուսանկարներով եւ յատակագիծներով: Ասիական առաջին թիւն է շարքի մը գոր Թօրամանեան մտադիր է հրատարակել՝ եթէ նիւթական միջոցներ ունենայ՝ « Պատմական հայ ճարտարագիտութեան » մասին: Այս հատորը հրատարակած է աջակցութեամբ Ալէքսանդրապոլցի պատմական Հայտն մը, Պ. Թարութիւն կառնեանցի, որ հակառակ համեստ դիւրի տէր անձ մը ըլլալուն՝ աղինութիւնն ունեցած է հատորի պատգամութեան ծախքերուն օգնել նիւթապէս: Կը մտղթենք որ ուրիշներ հետեւին այս գեղեցիկ օրինակին եւ Թօրամանեան կարենա՞ն հրատարակել իր հոյակապ ստումնասիրութեանց ամբողջութիւնը: Թօրամանեան մը՝ ինչպէս Կոմիտաս վարդապետ մը՝ որ հայ ցեղին հին գեղարուեստը կը վերակենդանացնէ եւ ամոր մէջ Հայուն ցեղային ստեղծագործ բաժինը կ'որոշին եւ կ'ապացուցանեն, այդ ազգութեան մեծագոյն բարերարներուն կարգը դատուելու արժանի են, եւ ասոնք որ կ'օգնեն այսպիսի գործիչներու՝ պարգապէս իրենց պարտքը կատարած ըլլալն հանդէպ հայ ազգին:

Չմտ ծածկեր որ սալութիւն եւ խորին տրտմութիւն զգացի կարգալով Թօրամանեանի հատորին այն տողերը, ուր կը գտնատի իր կարգ մը հակասակորդներէն որ « ականջէ ականջ փափառքներով փորձեր են իր գործը սպաննել եւ զինքը յուսահատեցնել »: Ո՞վ կարող են ըլլալ, ինչպէս կարող են գոյութիւն իսկ ունենալ այդ հիշշները. որ Թօրամանեան մը հալածելու գաղափարը կրցած են ունենալ: Լե՛հ, որ առաջին օրէն ջերմ համակրութեամբ վերաբերուած է զգալի Թօրամանեանի եւ զայն միշտ սրտագին գնահատած ու խրախուսած է, կը փափայէր որ ինքն իսկ այս խորհրդին բողբ վերցնէր. դիմակալեալ ընէր սա արատաց ճիւղաղները, եւ զանոնք լաւ մը խայտառակէր:

* *

Ազիպատոսի Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութեան հիմնադիրներէն եւ գլխաւոր ղեկավարներէն մին՝ Երուսաղիմ պէն Աղաթօն, քանի մը լրագիրներու մէջ վերջերս հրատարակած էր յօդուած մը, որով հայ ցեղին բարոյական անկումը նկարագրելէ յետոյ՝ իբր դարման կ'առաջարկէր բարոյագիտութեան դասագիրք մը հրատարակել եւրոպական նմանօրինակ լաւագոյն գործերու հետեւողութեամբ եւ բարոյագիտութեան դասը՝ այդպիսի դասագրքի մը վրայէն՝ պարտաւորել ընել մեր բոլոր գաղութ-

ներու մէջ, Այս հարցին վրայ շատ բան կայ ըսելու. պիտի երկու բառով ամփոփեմ առ այժմ մտածումս. Նախ՝ ես համամտ չեմ մեր ցեղը այդքան լուսաւորածութեանը հնչեալ համարելու. նկատելով զայն իր միջավայրին մէջ. բաղդատելով իր գրացիներուն հետ, ան ունի բարոյական մեծ յաղակութիւններ. ունի նաեւ մեծ, շատ մեծ թերութիւններ. (ալբի առջեւ ունի մեծ, ոչ թէ չուկայի գոտապարզը. որ խաբարայ է՝ աւելի կամ պակաս՝ ամէն տեղ), իայց համարիտ եմ որ մեր ցեղին թերութիւնաց սրբագրուելուն, անոր բարոյական գործառնալուն, աւելի եւս ազնուանալուն, բարձրանալուն համար անհրաժեշտ է որ վանքեր ընենք, բարոյագիտութեան հայրենի գասաղիքը մը յորինել. բարոյագիտութեան դաս մը հաստատել մեր բոլոր դպրոցներուն մէջ, շատ լաւ գաղափարներ են. բայց ոչ բաւական կան միջոցներ աւելի արմատական. աւելի հզօր եւ լուրջ. Հայ ժողովրդին թերութիւնաց մեծ մասը իր գաղափար ստրկական կենդանուն կը դրոյն. Ռուսահայ՝ որովհետեւ մօտ դարէ մը ի վեր ստրկութի կացութիւնէն ազատած են, բարոյական գաղափարներ կը դրոյն, աւելի բարձր են քան Թրքահայերը. Պէտք է ուրեմն 1. աշխատել, այս կամ ձեւով. որ Հայութիւնը ստրկացնող պայմանները ջնջուին. 2. Պէտք է կարող ձեռնահաս, « եւրոպական » ոգով ուսուցիչներ պատրաստել. առանց լաւ ուսուցիչ լաւագոյն դասաւորելը ոչ մէկ օգուտ ունի, ու լաւ ուսուցիչ մը՝ նոյն իսկ առանց դասաւորելի մասնաւոր բարոյագիտութեան պէս դաս մը համար կարող է մեծ արդիւնքներ տալ. Պէտք է ուսուցիչներ պատրաստել. ասիկա միշտ ըսած եմ. ու պիտի կրկնեմ յախտեան Այժմ, աւելի քան երեք քիչ են մեր մէջ լաւ ուսուցիչներ. — եւրոպական միջավայրի մէջ պատրաստուած, «ազատ առողջ մարդկոց ոգով» սոցիորուած ուսուցիչներ. 3. Պէտք է զօրացնել հայ գրականութիւնը, մասնաւորապէս՝ շինիչ, առողջ, մաքուր գրականութիւնը, հրատարակել ազգին ներշնչմամբ գործեր հայ ազգայնորներու. հրատարակել եւրոպական վիճողի հեղինակներու, (Հիւսիս, Բորնիլ, Շլլէր, Էնշ), գործերու. կամ մեծ մտածողներու (Դնչպէս հոյակապ Մարկուս Աւրելիոսին) խորհրդածութեան թարգմանութիւնները. — Այն ինչ որ պարտաւորապէս կարող է տալ այն արդիւնքը որ Եւրոպայի պէս Աղաթիւ կը բաղած ձեռք ձգել. եւ 100 տարի սպասելու պէտք չի մնար այն ատեն, Ամէն պարագայի մէջ Հայկ. Բարեգործ. Ընդհ. Միութիւնը մեծապէս շնորհաւորել է որ այս կարգի կարեւոր հարցերով կը զբաղի. ազգին մտաւոր ու բարոյական վերականգնման կ'ուզէ աջակցել:

* *

Դանի մը ամսէն հայ ժողովուրդը պիտի ընտրէ իր հայրապետը, ի մօտը պիտի ընտրուի Նաեւ Պոլսոյ պարլամենտը. եւ իմ քուէ կուտած կաթողիկոսական աթոռին համար՝ ինչպէս

արդէն գրած եմ Պոլսոյ Տաճարին ուղղեալ համարի մը մէջ՝ կարապետ Եպիսկոպոս Տէր-Մկրտչեանին (*), իսկ պատրիարքական աթոռին համար՝ Բարգէնի եպ. Կիւլէյեանին, ինչպէս պատահեցաւ. որդացեալ Իսմիրլեանին, Երկու հմուտ, խոհաւոր, լուսամտի, գործունեայ կարող հայ եկեղեցականներ, որոնք ցարք տուած են իրենց թէ՛ ուսումնական մարդու. եւ թէ՛ վարչական գործիչի կարողութեան ապացոյցները. Պիտի առաքելն ինքեւս թէ երիտասարդ էր. Միթէ ստիկա՞ մերթ՝ առաւելութիւն մը չէ՞. Բարդ կացութիւն մըն է որուն մէջ կը գտնուինք, բազմաթիւ հարցեր կան լուծուելու. կ'ենթոյն, գոհուր հարցեր. պէտք կայ կորովի. աշխոյժ, անխնայ գործիչներու, որ ստորիքէն մաշած չլրան, որ՝ մասնաւոր՝ ձեռնութեան յառաջացուցած հիւսանքութիւններէն մէկուն ձեռքով յանկարծ զգեստուած՝ մէկ տարի պայտաւորութիւնէն յետոյ աթոռը թափուր եւ գործերը աւակար անորոշ վիճակի մէջ չթողուն. ինչո՞ւ խրտչինք առողջ հասակի

(*) Կաթողիկոսական գանու համար՝ ցարդ առաջարկուած միւս անձնաւորութիւններ են Օրմանեան, Սուքիաս, Գուրեւն եւ Սուրենեան Եպիսկոպոսներ. Օրմանեան եւս լաւ հայրապետ կը կարող ըլլա՞ր՝ եթ ընտրուէ եւ թողիկոս այն միջոցին երբ պատրիարք ընտրուեցաւ. այժմ եւս ձեռ է, եւ բեմամբ եւս ունի. իր անձը կասեցի վեներու առաջարկ եղած եւ. արդ՝ հայրապետը պէ՞տ է այդքան սուր կուսակցական հարց չլրլալ, այլ կապ մը աւելի կուսակցութեան փոխէ: Սուքիաս արեւմտայ պատեական Հայ մըն է, աւելի, ազգասէ, մեկնեալ հայ դպրութեանց, անձուր, արի գործիչ՝ Հայ եկեղեցւոյ Եանեմն հաւատարիմ. բայց եւրոպական նրբութիւն չունի, եւ ձեռ է: Գուրեւն արեւիսկոպոսը հայ եկեղեցականութեան ամենէն նուրբ, ամենէն արեւտագէտ եւ իմաստասէր ուղեղն է, բայց իր պատրիարքութեան վերջին փուլին մէջ ցոյց տուաւ որ չունի այն կորովը, վճռականութիւնը եւ նշանաւորութիւնը որ անհրաժեշտ են պատրիարքի մը կամ հայրապետի մը մօտ. լաւագոյն է՝ իրեն ինչպէս եւ ազգին հասակի՝ որ « Հոլովութեան Միմըն իմ հոյակապ անձնաւորութեան հարցակէ լրլալ քրմայայ արդի գրական մատուցականութեան պատրիարք: Իսկ Սուրենեան որքանոյն ու է ի յուր կարողութեան զուրկ անձ մըն է, Մարկոսին կամ Կիրակոսին գործի գաւառաւ դասապատուած. իմն էր որ՝ Խիսեան կաթողիկոսին մահուանէն յետոյ իր սեպակալութեան միջոցին: Մետալ Եպիսկոպոսը՝ ազգեկոսեան Եպիսկոպոսին ձեռնէն առնելով Մարթեան վարդապետի յօդուածը պարտական է Արարաթի թիւ մը Մայր-Տաճարի բակը հաւասարմանակ խառնկի մը վրայ այրել տալ, եւ «Արարաթի» խորագրով իմը բաղմանուր Գարեգին Վ. Յովսէփեանի ձեռնէն առնելով Մարթեան վարդապետի անուն ու է թաղանթը ուրի անձեան եւ անձնակերպի միարեւի մը լամենց . . . Յարմարագոյն ընտրելի՞ Կարապետ Եպիսկոպոս Տէր-Միքայեանն է, որ ունի եւս ինչ բեմամբ, եւ կը վայելէ ընդամենը յարգամբ. ան այն միակ անձն է որուն անունին վրայ հակասութեանակցականութեան մեծագոյն մարդ եւ օրմանականութեանը կրման համաձայնութեան մը գալ: Եւ կը կարծեմ թէ մոյն իսկ «Հարեգին» իմ պատեական

մարդոգմէ եւ կարծեմք թէ ալեւոր մագերէն անհրաժեշտ են մեր հայրապետական կամ պատ-
րիարքական աթոռներուն համար: Լուսաւո-
րիչ քառասունհինգ տարեկան էր երբ հայ-
րապետական գահը հիմնեց. Մենք Ներսէս երի-
տասարդ էր: Գրեգոր Պալաուռնի քսան տա-
րեկան էր երբ կաթողիկոս ընտրուեցաւ:

Իսկ այն պատկանելի ալեւոր ծերունին,
որ Օրմանեան սրբազանն է, անհրաժեշտ է
չուտով հանել այն անարդար, անհեղին խա-
տառակութեան ցեխէն ուր կը քերուէ կուրաց-
ման բուլէի մը գլինքը նետեցնին ափ մը մար-
դիկ: Օրմանեան, ես համոզուած եմ, ոչ միայն
չէ այն ազգատեսաց, անձնամոլ մտայ տիպարը
զոր կ'ուզեն ներկայացնել, այլ՝ ունենալով
հանդերձ իր թերութիւնները՝ ազգաւէր լա-
հայ մարդ է, կարող քարոզիչ, հմուտ ուսու-
ցիչ, ներսնի եւ կորովի պատմագիր, Լուսե-
րիկ մը ալ՝ Տէր-Ներսէսեանի գործերէն պատրու-
թեան շրջանին՝ շատ խիստ լեզուով քննա-
դատած եմ զինքը. այսօր կը ցաւեմ այդ լեզուն
գործածած ըլլալուն, երբ աչքի առջեւ կը բե-
րեմ Օրմանեան սրբազանի տնձնաւորութիւնը
իւր ամբողջութեան մէջ. — ակահառուներն ազա-
տական հսկայ պայքարին զլլաւոր վարիչներէն
մին եւ գրիչը. իրողութիւն անձնուէր եւ վառ-
վռուն առաջնորդ. Սրմաշի դպրեվանդի կարող
եւ քաջամարիւն վանահայր եւ ուսուցչապետ,
Էջմիածնայ Գէորգեան ճեմարանի պատուած
ուսուցիչ, առաջնակարգ քարոզիչ, հմուտ սա-
տուածաբան, պատմադէտ, հնդիկակ « Հայ
եկեղեցւոյ պատմութեան » ֆրանսերէն հոյա-
կապ գործին, եւն. եւն: թիթիւսականութիւն
եւ անդիմութիւն եւ այդպիսի անձ մը իրը
դասաւան տուէր փակուած պահէ. ու միակ
դաւաճանը, միակ պատժուածը! որպէս թէ 15
տարիէ ի վեր ամենքը, ամենքը, քաջարձակ
անթերի իշխող, եւ միայն Օրմանեանն էր
հայկական դատին վիժման պատժուած! Եւ այս
այն միջոցին երբ մարդը հայ եկեղեցւոյ ոգեղն
այդ սքանչելի մեկնութեամբ « հայկական դա-
տին » յաղթանակ մը տանել տուաւ ամբողջ
եւրոպայի առաւորականութեան մօտ. . . Մենք
զմեզ պատուած կ'ըլլալեք թէ՛ փութանք վա-
ւերացնել քննիչ յանձնաժողովին նպատաւոր
տեղեկապիւրը, յայտարարենք այլաբար թէ՛ այդ
նշանաւոր հայ գործիչը սխալմամբ է որ ազ-
գադաւ կարծուած էր, զենեք զայն իրեն
հրապարակ իր գործիչ իր բոլոր կարողու-
թիւններով գործելու վիճակին մէջ, մէկ խօս-
քով՝ օգտուինք իրմէ, կը կարծեմ միայն թէ

իրեն համար բնաւ անհրաժեշտ չէ կաթողիկո-
սական գահը՝ ազգին օգտակար ըլլալու հա-
մար: Դաշար Փարպեցի կաթողիկոս չէր, ոչ
ալ Պրոքնացին, (եւ երկուքն ալ իրենց ժա-
մանակակիցներէն անուանարկուած ու հալա-
ծուած են): Բայց շատ մը միջակ կաթողիկոս-
ներէ աւելի օգտակար եղած են ազգին:

Ա. ԶՈՊԱՆԵԱՆ

ՄԱՐԿԱՅԻՆ ՏԱՌԱՊԱՆՔԻ ՈՒԹԵՐՈՒ

ՏՆՏԵՍՈՒԹԻԱՆ ԳԱՂԱՔԱՐՈՎ ԲԱՏԱՅՐԱՍԾ

Ա.

Մարգկային կեանքի մէջ ամէն բան շար-
ժում է: Զգացումները, յիշողութիւնը, դա-
տողութիւնը, ուշադրութիւնը եւ ֆիզիքական
վիճակները ամէնքն ալ շարժում են: Իսկ շար-
ժումը ուժ է:

Անհատը պէտք է նկատել ֆէյէ-տէ-է եւ
բարոյական ուժերու խորքէ մը: Ան կը գործէ,
կը խորհի, կը վստահի, կը յետադիմէ եւ կը
յառաջդիմէ այդ ուժերու կիրարկումով միայն:
Դրամը, արհեստները, արուեստները, միքե-
նաները, ձամբաները, շէնքերը բոլորն ալ այդ
ուժերու առարկայացած արտայայտութիւններն
են:

Անհատը ֆիզիքական եւ բարոյական ու-
ժերու խորք մը նկատելէ վերջ՝ ընկերութեան
համար շէնք կրնար տարբեր բան մը խորհի:
Ան ալ ունի ամբարձի մը որ՝ աւելի զնոյգուա-
ծային՝ կը շարժի, կը սպառէ եւ կ'արտադրէ:
Ան ալ ունի բարոյական կանոն մը որ՝ աւելի
խոշոր ու բարդ խորշերով կը սիրէ, կ'ստէ, կը
յուզուի եւ կ'արտայայտուի արուեստի եւ մտա-
ծումի գործերով, ազնիւ ձգտումներով կամ ցը-
նորենքով:

Ընկերութիւնը ֆիզիքական եւ բարոյական
ուժերու միմեք մըն է: Խնդիր է գայն անտե-
սել: Վասն զի ամէն յառաջդիմութիւն, ամէն
քաղաքակրթական նորութիւն կարելի կ'ըլլայ
միայն ուժերու խելացի գործածութեամբ:

Մարգկային յառաջդիմութիւնը ձամբոր-
դութիւն մըն է աշխարհի յեղ ի նորոգումը:
ձամբորդը իր սրունքներուն կորովը պարտաւոր
է հաշիւով եւ կանոնաւորութեամբ կիրարկել:
Զիմարական բան է մէկ ոտքով ետ եւ միւսով
առաջ երթալը:

Տնտեսւոյ գզգզումը քաղաքակրթական
ստեղծագործութեան պատճառ է: Եւ ամէն
գիտական ստեղծագործութիւն կորովը անտե-
սութիւնը կը պարգայեն՝ սահմանափակելով
աւելորդ վատնումներու չափը:

Հիմնական սկզբունքն է սա:

Պատմական իրականութեան մէջ գիտական,
անտեսական, կրօնական, լեզուական, դաստիար-
ակական, քաղաքական ամէն ստեղծագործու-
թիւն կ'ամ ուժերու անտեսութեան գզգզումէն

բարեկամեմք՝ Լէօ եւ Թումանեան, որոնք պահ մը քիւր-
մացութեան մը զոն դառնալով՝ ազնիւ բայց անարգար
զայրոյթ մը րոկուած՝ յարմարեցան Կարապէտ եպիսկո-
պոսին վրայ, իրենց իսկ պիտի զգան այդ կարող եւ
ամուր եկեղեցականին անուան վրայ լեզուամուր նամակա-
նութեան մը գալուն անհրաժեշտութիւնը եւ պիտի աղակցին
առաջ: